

տը, կ'անցնիմ կամուրջն, և ահաւաս-  
սիկ կալագայի առաջին սրճարանին  
լուսաւորեալ դրան առջևն, Եունք,  
Ռոզասպոյ, Սանկորոյ, բոլոր իմ փաքր  
իտարիաս որ ինձ ընդ առաջ կու դայ

ծիծաղկոտ զէմքով և երկայնեալ բաղզ  
կօք . . . և կը կլնեմ երկայնագոյն և  
լայնագոյն շունչերէն մէկն՝ զոր երբեք  
կըլլած ըլլաց ազնուականի մը թոփերն

ԵՐԱՐԴԱՅԻՆ ՀԱՅՈՒՅԹ :

Ա.ՏԵԼՈՂԵՐԿԻ ԳԱՐԱՐԵ

Ղիւրիկիոյ զարմանալի բանեթուն մէջ  
հաշակաւորագոյնն է անտարակցոյ Ա-  
տելապէրկի հանքերն և մամնաւորա-  
պէս կրողդպի մետաղն, որուն մուտքը  
հօս՝ ի պատկերի կր ներկայացրնենք:

Ասելապէրկ՝ Լուպիհանայի վարչութեան մէջ պղտի քաղաք մ'է, համանուն գաւառին դիմաւոր տեղի, հեռի ի Լուպիհանայի (Լայպակի) 38 քիլոմէրդ գէպ ՚ի հարաւային արևմտաւոք: Զարմանալիք քարանձաւը, որ քաղաքին անունն առաւ, Ասելապէրկէ քիչ հեռու փոքր հովտի մը մէջ կը գտնուի, Լուէկ լին մօա: Եւրոպից ամենէն նշանաւոր հանրն է, և տարածութեամբ և գեղեցկովթեամբ թերևս բոլոր աշխարհին: Մէջը կրնան պտղարտիլ զրեթէ ինչուան ութ քիլոմէդը՝ ճամբաներու, սրահից, նուրու անցից, լայնատարր գահինաց, անձուկ սենեկաց, ուղիղ և ծամածուռ սանդղոց (յորոց կ'ելլես և կ'իշնես ուրիշ վերնակայ և ստորակայ այլեր) լաբիւրինթոսի մը մէջ. ամեն կողմ սփռուած է նախսային հեղեղեան կենդանաց բրածոյ սոկերք կամ ծածկուած ալապատիւան շինքարամիք, որ քեզի կ'ընծայեն զանազան տեսիլներ, մերթ հին պալատան մ'աւերակը հանդիսացնելով, մերթ տաճարի մը մեծավայելու կամարակապ սրահը. երբեմն ամենասպահտակ վրաններ և կախուած թեթէ քողեր, երբեմն մարդկանց և կենդանաներաց ամենէն օտարաձև պատկերներն,

Ատելսպէրիկ այրէս զատ, որ նըշա-  
նաւորագոյնն է, կը համբուին այս  
նկուղներէն կամքարանձաւներէն ու-

ըիշ Հաղպարէն աւելի՞ բոլոր այն ալեհն  
ընդարձակ երկրին վրայ սփռուած, որ  
կ'ինքնայ Ալպեանց Գարնինիսէի և Ճիռ-  
լիէի տակ՝ աւստրօ-իտալական սահմա-  
նակիխոն վրայ:

Այցելուք կ'իջնեն Ատելսպէրկի այրն՝  
առանձին կերպով լուսաւորուած հա-  
րիւրաւոր մոմերով, և երկաթէ լայն  
գոնէ մ'անցնելով կը գտնուին նորա-  
նշան տեղ մը. ուր հարիւր հնչող ար-  
ձագանդք ծածկուած 'ի խորն կը բազ-  
մապատկեն հեղեղատի մը տիխուր կար-  
կաջը, որ բազմաշտաշ կը վազէ այն  
անհօն ստորերկրեայ տեղեաց մէջ և  
հօն կը կորսուի: Բօհքդ գետն է՝ որ  
խորհրդաբար կը սորյա այն յափան-  
նական խաւարին մէջ: Կամրջէ մը  
կ'անցնիս անկէ: Այս անուանի քար-  
անձաւին բերնէն երեք կամ չորս քի-  
լոմէդը հեռու՝ ուրիշ այրի մը մուտքը  
կայ: Մատուալենա անձան է՝ Ատելս-  
պէրկիննեն աւելի բարձր և անկէ աւե-  
լի նշանաւոր շիֆքաբարանց ճոխութեամբ  
և զանազանութեամբ, այլ նոյնչափ ըն-  
դարձակ չէ: Հօս կու դայ Բօհքդ կոր-  
սուելու, որ այս ստորերկրեայ տեղեցն  
ծայրը լիմ մը կը ձևացընէ լցեալ բազ-  
մաթիւ բրոդէիներով, եզական գե-  
ռունք՝ որ արևոն լցան երբեք չեն  
տեսներ և որոնց վրայ շատ առասպել-  
ներ երան:

Զենք ուզելի հօս մանրամասնաբարդ  
նկարագրել ամենայն տեսարաններն  
զոր կ'ընծայեն քարանձաւքս. միայն ըն-  
թերցոցին կը թողունք երևակայինքու-  
այն զարմանալի պատկերն այնշափ մո-  
մերու րուսակ անդրադառեալ և բեկ-



Ատելսպէրկի անձաւաց մէկուն մուտք :

բեկեալ՝ ի պտկսքարանց և ՚ի շթաքարանց ծիածանին ամենայն գոյներով։

Ատելսպէրկի մետաղներն ճսիս են հանքային աղով, բուսական և կենդանական կինաց այսպիսի կարեսը գանձով, զոր բնութիւնը լիածեռն սփռած է ՚ի խորս երկրի և ծովուց և զոր տէրութիւնք ագահութեամբ կու տան իրենց հպատակաց։

Բնիկ ծովային աղն կամ հանքային աղն կը գտնուի հսաստատոն վիճակի մէջ խաւ խաւ տարածուած, մերթ անգոյն և մերթ կարմիր, գեղինի, և այլն, զարկած, ըստ հողախառն աղերու, ու բոնցմով խառնուած և բաղադրուած

է : Հանքային աղը կը պեղեն գուբերէ և ներբնուղիներէ, ինչպէս ուրիշ հանքաց մէջ, և նցն տեղւցն վրայ կը զըտեն : Այս զառումը կ'ըլլայ երկաթէ մազի մը մէջ հանքային աղի կտորներ դընելով և ջրոյ ընդունարանի մ'երեսին վրայ կախելով այն մաղն : Ըստ լուծման աղին ջրով աւելի ծանրանալով, վար կ'իջնէ : Կը թողուն որ պղտոր հեղաւկը նատի, հողախառն նիւթերն յատակը կը վաղեն .լուծումը պայծառ կը շոգիանայ և ամենասպիտակ աղերու բիւրեղներ կ'ունենաս, որ կը ձեան մակերկութիւն վրայ և հեղուկին յատակը կ'ինկնան :

☞ Հետեւեալ Դք Պրակը բույր պիտի նուկրենք Երրորդ Առարշագրական Հարազագագառ, որ հանդիսացաւ ՚ի վենետիկ տարւոյս մեսպիտմբերին, և յորում մեր Միաբանութիւնն ալ մասն ունեցաւ իրեն այս ուսմանս վերաբերեալ երկասիրութեամբքը։